ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 144-Ա
« 21 » ՀՈՒԼԻՍԻ 2023Թ.

ԿԱՐԵՆ ԱԶԱՏՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ԵՎ «ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ԵՐԿՐԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԿԱՐԻՆԵ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ՎՐԱ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2003 թվականի հունվարի 17-ի թիվ 3 որոշմամբ հաստատված «Վայոց ձոր մարզի Եղեգնաձորի երկրագիտական թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 38-րդ կետը, Կարեն Ազատյանի հետ կնքած 2022 թվականի նոյեմբերի 21-ի N511 աշխատանքային պայմանագրի 6.1 կետի «գ» ենթակետը, Կարեն Ազատյանի դիմումը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ

1. 2023 թվականի հուլիսի 24-ից լուծել ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Վայոց ձոր մարզի Եղեգնաձորի երկրագիտական թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Կարեն Ազատյանի հետ կնքած 2022 թվականի նոյեմբերի 21-ի N511 աշխատանքային պայմանագիրը:

2. 2023 թվականի հուլիսի 24-ից ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ենթակայության տակ գտնվող «Վայոց ձոր մարզի Եղեգնաձորի երկրագիտական թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը դնել նույն ՊՈԱԿ-ի ֆոնդապահ Կարինե Ստեփանյանի վրա:

3. ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ենթակայության տակ գտնվող «Վայոց ձոր մարզի Եղեգնաձորի երկրագիտական թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունում հանձնման-ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

4. Հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել կազմակերպության նյութական պատասխանատու անձանց:

5. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

21.07.2023

X

ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ

Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ Signed by: SARGSYAN DAVIT 4105850407

Ք.Եղեգնաձոր

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2023թ հուլիսի 21-ի
N -Ա որոշման

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ «ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ԵՐԿՐԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ» ՊՈԱԿ-ՈՒՄ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

Հանձնաժողովի նախագահ՝

Աղասի Հովհաննիսյան	ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության փորձագետ

Անդամներ՝

Լուսինե Հարությունյան	ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության ավագ մասնագետ
Աննա Սաֆարյան	ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության գլխավոր տնտեսագետ